

ԺԱՆ-ՄԻՇԵԼ ԹԻԵՐԻ

ՍԵՊՈՒՀ ԼԵՌԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
(հնագիտական ուսումնասիրություն)

Սեպուհ լեռը գտնվում է Արևելյան Անատոլիայում: Դա արևմուտքից արևելք ձգված երկարավուն թերթաքարային մի լեռնաշղթա է, որի բարձրությունը հասնում է 3031 մետրի Կարադաղում:

Սեպուհ անվանումը երևան է գալիս միջին դարերում միայն: Հին հեղինակները նրա մասին խոսում են որպես Մանեի քարանձավների լեռ[1]: Այս լեռը երբեմն հիշատակվել է նաև «Գոհանամ լեռան» (–Քեհնամ դաղ) անունով, սակայն ներկայումս լայնորեն տարածված է Կարսուդաղ (Սև լեռ) անունը:

Հակառակ իր ներկայացրած պատմական կարևորությանը, այս շրջանը մնացել է գրեթե չհետազոտված: Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը Ժ դարի սկզբին այս շրջանում կատարած իր մի ուխտագնացության մասին թողել է գունագեղ, կենդանի և ճշգրիտ մի նկարագրություն: ԺԹ դարում այստեղ են այցելել Է. Բորեն[2], Դ. Հակոբյանցը, Է. Փերտահչյան եպիսկոպոսը և Գ. Սյուրմենյանը[3], որոնք բոլորն էլ, բացի մի քանի ժլատ տողերից, ոչ մի ուշագրավ ուսումնասիրություն չեն նվիրել այս շրջանի հուշարձաններին: Այդ մասին կան միայն առանձին կարճ նշմարներ և համառոտ տեղեկություններ հավաքածո երկերում[4]:

Պատմական տվյալներ.

Սեպուհ լեռը գտնվում է պատմական Բարձր Հայք նահանգում, Դարանաղյաց և Եկեղյաց գավառների սահմանին, որոնցից առաջինի կենտրոնն էր՝ Կամախ (Անի) քաղաքը, իսկ երկրորդինը՝ Երեզը (Երզընկա), ինչպիսին է պարագան նաև այսօր[5]:

Քրիստոնեության մուտքից դեռ շատ առաջ այս շրջանը եղել է մշակութային կարևոր կենտրոն: Արտաշես Ա թագավորը (123—94 Ն. Ք.?) նպատակ էր ունեցել հունական տաճարներից բերված աստվածների և աստվածուհիների մի քանի արձաններ կանգնեցնել Հայաստանում: Նրա որդին՝ Մեծն Տիգրանը*, բազմաթիվ մեհյաններ կառուցեց Անիում, Թիլում, Երեզում, Թորդանում:

Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորը կործանեցին հեթանոսական տաճարները և խորտակեցին նրանցում գտնվող արձանները, իսկ մեհենական բոլոր կալվածքները տվեցին Եկեղեցուն:

Սեպուհ լեռը ապաստան ծառայեց Մանե կույսին և սուրբ Գրիգոր Լուսավորչին, Թորդանը դարձավ պանթեոն արքայական

* Հեղինակը հետևել է Խորենացու հաղորդած տվյալներին: ԽՄԲ:

և հայրապետական ընտանիքների համար, իսկ Թիլում պատսպարվեցին սուրբ Գրիգորի որդի Արիստակեսի (Մովսես Խորենացի, Գ, էջ 91. Փավստոս Բուզանդ, Գ, էջ 2) և Մեծն Ներսես Հայրապետի շիրիմները (նույնը, Ե, էջ 24): Եկեղեցուն տրված որոշ կալվածքներ վերջում, անկասկած, դարձան սուրբ Գրիգորի և նրա ընտանիքի սեփականությունը, որովհետև գիտենք, որ նրան էր պատկանում Թիլ մեծ ավանը, ինչպես նաև մի այգի-զբոսարան Թորդանում: Հեթանոսական այս բոլոր վայրերի քրիստոնեացումով Սեպուհ լեռը դարձավ նոր կրոնի մի մեծ սրբատեղի, որ Գրիգոր Դարանաղցին ԺԷ դարում համեմատում էր Երուսաղեմի հետ և մեծ ոգևորությամբ նրա գովքն էր հյուսում որպես մի նոր Թեբայիդա[6]:

Բյուզանդական կայսրության շրջանում արաբական ասպատակությունները ու հունական հակահարձակումները փաստորեն դադար չունեցան վեցից մինչև իններորդ դարերը[7]: Սրանով է բացատրվում մատենագրական աղբյուրների բացակայությունը վաղ միջնադարի ամբողջ ընթացքում, սակայն մասամբ միայն, որովհետև հետագա մոտ երկու դարերում էլ դեռ, հակառակ վերահաստատված խաղաղությանը, կարելի է ոչ մի տեղեկություն չի հասել մեզ այս շրջանի մասին:

Անատոլիայից բյուզանդացիների վտարվելուց հետո (1071 թ.) սկսվում է քաղաքական անկայունության երկարատև մի շրջան մահմեդական զանազան ցեղերի ու քաղաքական խմբակցությունների միջև: Մինչև 1228 թվականը երկրի տերերն են դառնում Մենգյուչեք թուրքերը, որոնց ձեռքից իշխանությունը խլում են Ռումի սելջուկները՝ ջախջախելով Խուարեզմի սուլթան Ջելալ-Էդդինի բանակները, որոնք հրի ու սրի էին մատնել ամբողջ Երզնկայի շրջանը[8]: Մոտ 20 տարի հետո, 1243 թվականին մոնղոլները երկրում հաստատում են իրենց գերիշխանությունը: Եթե դատելու լինենք ձեռագրերի այն մեծ քանակությունից, որ մեզ է հասել այս շրջանից և այս ժամանակահատվածից, ապա պետք է ենթադրել, որ տեղի հայկական համայնքները շատ վնասներ և նեղություններ չեն կրել այս իրադարձություններից: Սեպուհ լեռը եղել է նույնիսկ մշակութային կենտրոն, որտեղ մեծ հռչակի են հասել բազմաթիվ վարդապետներ:

Ավելի ուշ, մի տեսակ անիշխանություն է տիրում ամբողջ երկրում: Մոնղոլ խաների ձեռքից մեծ դժվարությամբ իշխանությունը խլում են Էրետնիդները: Այնուհետև երկիրն ընկնում է Կարակոյունլու և Ակկոյունլու թուրքական ցեղերի գերիշխանության տակ: Հիշատակարաններից գիտենք, որ 1425 և ապա 1439 թվականներին այս վերջինները հրո ճարակ են դարձնում բազմաթիվ վանքեր[9], իսկ 1450 թվականին Կարակոյունլու Ջիհանշահը ավերում է երկիրը և կալանավորում ու գերի տանում մեծ թվով հայերի[10]: Զարմանալի է հետևաբար հաստատել, որ վանական կյանքն ու գործունեությունը (կառուցումներ, ձեռագրատներ) կարողացել են գոյատևել ու զարգանալ նման պայմաններում: ԺԵ դարում ևս, ինչպես ԺԳ դարում, Սեպուհ լեռևն վարդապետարանները գտնվում էին ծանր վիճակում: Պետք է նշել, որ վերը հիշատակված ռազմական իրադարձությունները, թեև անմարդկային ու վայրագ, մասնակի երևույթներ էին մնում, և որ Ակկոյունլուները հաճախ ցուցաբերում էին համեմատաբար բարյացակամ վերաբերմունք քրիստոնյաների նկատմամբ:

1514 թվականին Դարանաղյաց գավառը վերջնականապես միացվում է Օսմանյան կայսրությանը, և երկար ժամանակ այնտեղ տիրում է խաղաղ գոյավիճակ, եթե չհաշվենք ԺԷ և հատկապես ԺԸ դարերում Ջալալիների կողմից գործադրված որոշ հարձակումներն ու կեղեքումները[11]: Ընդհանուր առմամբ, թվում է, որ պատերազմական և քաղաքական իրադարձությունները, որոնք միջին դարերում, ինչպես և արդի ժամանակներում, իրար հաջորդեցին Անատոլիայում, թույլ արձագանք գտան այս սուրբ լեռան վրա, որը հաղորդակցական մեծ ճանապարհներից դուրս գտնվելով՝ ապրում էր հայկական քրիստոնեության ամենահեռավոր անցյալի հիշատակով:

Սեպուհ լեռան վրա մեր կատարած երկու ճանապարհորդությունների ընթացքում մենք կարողացանք այցելել և ուսումնասիրել բազմաթիվ հուշարձաններ: Մենք հաստատեցինք, որ Թիլի, Սոխայի և Ծանանոիճի վանքերը ամբողջապես անհետացել են: Այնուամենայնիվ չենք կարող հավակնել, թե մենք հիմնովին և սպառիչ կերպով ուսումնասիրել ենք տեղանքը: Հնարավոր է, որ այլ շինություններ դեռևս մնում են թաքնված լեռան դժվարամատչելի մասերում: Այստեղ մենք տալիս ենք մեր հետազոտությունների արդյունքը՝ կցելով դրան հնագիտական և պատմական համառոտ մի մեկնաբանություն[12]:

ՄԵԾ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԱՆՔ

Այս վանքը ծանոթ է եղել նաև Հանգիստ Լուսավորչի վանք, Սեպուհի վանք, Մանեի

Այրիվանք, Գառնիկավանք անուններով: Տեղի մահմեդականները այն կոչում են Զանկլրը վանք (զանգակով) վանք):

Վանքը գտնվում է շուրջ 2600 մետր բարձրություն ունեցող մի լեռնագագաթի վրա: Կարսուդաղի այդ լեռնագագաթը հարավային կողմից ընդհուպ մոտենում է Դուռնակալեի սրածայր կատարին[13] և իշխում կրաքարե պատերով շրջափակված մի հեղեղատի վրա: Պատերի մեջ փորված են բազմաթիվ քարանձավներ:

Պատմական տվյալներ

Վանքի պատմությունը հիմնականում հյուսված է ավանդություններով, որովհետև պակասում են արձանագրային տեղեկություններ, իսկ մատենագրական հազվագյուտ աղբյուրներն էլ կասկածելի են:

Ինչ վերաբերում է վանքի տեղանքի կամ նրա անմիջական շրջակայքի շուրջ հյուսված ավանդություններին, ապա դրանցից կարող ենք առանձնացնել չորսը.

1. Մանեի առանձնացումը և նրա մահը

Այս մասին ամենից ավելի տարածված և ընդունելի զրույցը Մովսես Խորենացու հիշատակած զրույցն է (Բ, էջ 91): Մանեն, որը սուրբ Հռիփսիմյանց խմբի անդամներից մեկն էր, չգնաց նույն ճանապարհով, որով գնացել էին մյուս կույսերը: Նա բընակվեց այս լեռան վրա, մի քարայրում, և դրա համար էլ լեռը կոչվեց Մանեի քարայրի լեռ: Սուրբ Հռիփսիմյանց պատմության մեջ դեռատի կույսերը անցնում են Դարանաղյաց գավառից և բնակություն հաստատում Սեպուհ լեռան գաղտնի խորշերից մեկում, որը կոչվում է Մանեի այր: Ագաթանգեղոսի Պատմության Քասունու տարբերակի մեջ հիշատակված զրույցի համաձայն, Վաղարշապատում Հռիփսիմյանց կույսերի նահատակության ժամանակ է, որ Մանեին հաջողվում է փախուստ տալ դահիճների ձեռքից և ապաստանել Սեպուհ լեռան վրա:

2. Սուրբ Գրիգորի առանձնացումը և նրա մահը

Ավանդական միանման աղբյուրներ չկան սուրբ Գրիգորի առանձնացման ճշգրիտ վայրի, տևողության, ինչպես նաև նրա զբաղմունքի և Մանեի այրում նրա բնակության պայմանների մասին: Առանձնացման վայրը հատկապես չի ճշտված Ագաթանգեղոսի կողմից (Ագ. էջ 157—159): Ըստ Մովսես Խորենացու (Բ, էջ 91), նա Մանեի այրում ապրել է նրա մահից հետո, սակայն ըստ Հովհաննես Դրասխանակերտցու կողմից հիշատակված մի ավանդության, նա հաճույքով բնակվում էր Թորդանում իրեն պատկանող հացիների մի անտառում: Ասում էին նաև, որ նա բնակվել է գիհի մի ծառի արմատների միջև, և որ այդ ծառը աճել է այն լեռնագագաթի վրա, որտեղ այժմ գտնվում է վանքը[14]:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի մահը ոչ ոք չի իմացել: Նա վախճանվել է անհայտության մեջ 325—330 թվականների միջև և թաղվել լեռնական հովիվների կողմից[15]:

3. Տրդատ թագավորի այցելությունը սուրբ Գրիգորին և նրա մահը

Ըստ Վարդան Արևելցու, Տրդատ թագավորը գնացել է Գրիգորին տեսնելու Սեպուհ լեռան վրա[16]: Նա ներկայացել է սրբին և նրան հանձնել ՀԱՎՀԱԼԻ կոչվող իր սուրը, որ նա նվեր էր ստացել Կոստանդին կայսրից: Գրիգորն օրհնել է սուրը, ապա այն կախ գցել օդում՝ ասելով, որ այդ սուրը պիտի ծառայի որպես նշան միաբանության, սակայն, մինչ այդ, նա կդադարի տեսանելի լինելուց և կերևա միայն նրանց, ովքեր արժանի կլինեն նրան[17]: Ըստ մի այլ ավանդության, Սեպուհ լեռան վրա է, որ Տրդատ թագավորը, յուրայիններից դավաճանված, մահացել է թունավորվելով:

4. Գրիգորի մասունքների հայտնաբերումը

Գոյություն ունեցող մի ավանդության համաձայն, Յոռնիկ (Բասեն) գյուղի մի բնակիչ՝ Գառնիկ անունով մի ճգնավոր, մի տեսիլքի միջոցով հայտնաբերել է սուրբ Գրիգորի անհայտ մասունքները ամենայն հավանականությամբ Ե դարի վերջերին[18] և դրանք տեղափոխել Թորդան: Հետագայում հայտնաբերման վայրում կանգնեցրել են մի վկայարան:

Ի տարբերություն դարերով պահպանված և ավանդաբար ճոխացված ժողովրդական այս զրույցների առատության, վանքի պատմական անցյալը շատ աղքատ է: Այդ անցյալի վրա լույս է սփռվում միայն Ժ դարի սկզբին, երբ, շուրջ 921 թվականին, Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը մի ուխտագնացություն է կատարում դեպի Մանեի և Սուրբ Գրիգորի այրը և այդ առթիվ նշում, որ ինքը կառուցել է տվել այնտեղ մի «հոյակապ եկեղեցի»: Դա, հավանաբար, այն եկեղեցին է, որը գոյություն ունի դեռ և գտնվում է գլխավոր եկեղեցուց դեպի ներքև[19]: Այս ժամանա-

կաշրջանից սկսած մինչև ԺԵ դարը, վանքը, հակառակ իր բարձր և մեկուսացած դիրքին, թվում է, թե եղել է ուսումնական կարևոր կենտրոն. Հովհաննես Պլուզ Երզնկացի վարդապետը (1250—1326) այս վանքում է ստացել իր ուսումը և ապա այստեղ է վերադարձել՝ ավարտելու իր կյանքի վերջին օրերը: Վանքին կից գոյություն է ունեցել մի ձեռագրատուն, որտեղ աշխույժ գործունեություն է ծավալվել գլխավորապես ԺԳ դարի սկզբին և ԺԵ դարի առաջին կեսին: 1439 թվականին վանքը կողոպտվել է Ակկոյունլուների կողմից, իսկ միաբանությունը ցրվել է մի որոշ ժամանակ[20]:

ԺԶ դարում վանքի գործունեությունը գնալով թուլանում է, և թվում է, թե այդ շրջանում գտնվող բազմաթիվ եկեղեցիներ կա՛մ կործանվել են, կա՛մ օգտագործվել այլ նպատակներով: Մի դար հետո վանքն ամբողջապես անկում է ապրում այդ վայրերում վխտացող Ջալալի ելուզակների նյութած գաղտնի դավերի հետևանքով, բայց առավել ևս այն պատճառով անկասկած, որ վանականները ձանձրացել էին այլևս ապրելուց այնպիսի մի վայրում, որ անընդհատ ծեծվում էր փոթորիկներից, իսկ ձմռանը թաղվում ձյան տակ: Այնուամենայնիվ, երբեմն մի եռանդուն վանականի ազդեցության շնորհիվ, վանքում միաժամանակ տիրում էր որոշ աշխուժություն: Հավանական չի թվում, որ վանքը տևապես լքված վիճակում է մնացել, հակառակ քրդերի հարձակումներին 1895 թվականին: Մեծ ավերներ է գործել 1939 թվականին այդ շրջանում տեղի ունեցած երկրաշարժը:

Վանքի նկարագրությունը

Վանքում դեռևս պահպանված են ապառաժուտ լեռան գագաթին թառած սուրբ Լուսավորչի անվան մեծ դամբարան-եկեղեցին, իսկ դեպի ներքև՝ Սուրբ Կիրակոս փոքրիկ եկեղեցին՝ երկուսն էլ վնասված: Մենք հաջորդաբար կնկարագրենք դրանք՝ այնուհետև մի քանի բառ էլ նվիրելով անհետացած կամ անմատչելի տեղերում գտնվող մյուս ուխտավայրերին:

Ա. ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԴԱՄԲԱՐԱՆ-ԵԿԵՂԵՑԻՆ (ՀԱՆԳԻՍՏ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ)[21]

Այս եկեղեցին համալիրային մի շինություն է, որ ընդհանուր առմամբ հիշեցնում է եռանավ բազիլիկա: Իմանալու համար, թե նա ինչպիսի կառուցվածք ունի, հարկավոր է տարբերել երկու առանձին մասեր.

ա. Արևմտյան մասը բաղկացած է երեք նավերից, որոնք զույգ սյունաշարերի միջոցով բաժանված են երեք ընդլայնված հատվածների, որոնցից արևմտյանը մի փոքր ավելի ընդարձակ է, քան մյուս երկուսը: Երեք նավերը միմյանցից բաժանված են կիսաշրջանակաձև կամարներով, որոնք հենվում են գլանաձև սյուների վրա՝ միջնորդված կողովաձև խոյակներով, որոնք կազմված են երկու շրջանակաձև գլաններից և խորանարդաձև հարթ վերնախարսխից, որն իր ներքևի անկյուններին երեսին կրում է մի տեսակ ծայրատված բրգաձև առագաստ (քանդակված խաղողի ողկու՞յզ արդյոք): Կենտրոնական նավը որոշապես ավելի լայն է, քան կողմնական նավերը. նավերից յուրաքանչյուրը ծածկված է կիսաբոլորակաձև թաղով՝ ամրացված հենակամարներով, որոնք հենվում են պատերից դուրս երկարող որմնասյուների և ազատ մույթերի վրա: Կողմնական թաղերը ավելի ցածր են, քան կենտրոնական թաղը:

Արևելյան ծայրին բացվում է կիսաբոլորակաձև մի աբսիդ՝ կողքերին երկու կամարակապ միջանցքներ և դրանց կից երկու ավանդատներ:

Կառույցը լուսավորվել է աղեղնաձև լայն բացված վեց պատուհաններով, որոնցից յուրաքանչյուրը բացվում է արտաքին պատերի ամեն մեկ հատվածում: Դրանք դրսից նեղանալով՝ փոքր լուսանցույցների տեսք են ընդունում: Դուռը բացվում է արևմտյան պատի մեջ կամարաձև մի լայն բարավորով, որի սպիտակավուն քարերը հակադրություն են կազմում մութ գույնի միջնորմի հետ:

Երկու որմնամույթերը ընդգծված են ճշգրիտ տաշված իրենց անկյան վրա դուրս ցցված կիսագլանաձև մի զարդաքանդակով, որի ներքևի մասը ընդհատված է մի կտրվածքով: Դա ուշ շրջանի ոճով հորինված մի աշխատանք է, ինչպես երկու կողմերից իրար ագուցված փոքրիկ խաչքարերը: Կառույցը իրականացված է կիսով չափ սրբատաշ քարերով և ամրացված է շաղախով: Ծածկը հարթ տանիք է և միանման կերպով ծածկում է կենտրոնական և կողմնական թևերը:

բ. Կառույցի արևելյան մասը կազմված է մեկ կենտրոնական մատուռից և կից երկու կողմնական ավանդատներից:

1. Կենտրոնական մատուռը բաղկացած է երկու մասից.

— Արևմտյան քառանկյունի մասը կազմում է բեմը և ծածկված է եղել այժմ փուլ եկած մի գմբեթով, հավանաբար առանց թմբուկի[22], որը հենված է եղել գմբեթակիր

կամարների վրա խոյակների միջոցով, որոնց հորինվածքը այժմ հնարավոր չէ ճշտությամբ որոշել քարի մաշված լինելու պատճառով: Կամարների միջև եղած տարածությունները լցված են առագաստներով: Այս մասը արևմտյան կողմից դուրս է գալիս նախապես նկարագրված բազիլիկայի աբսիդի խորքը՝ դեպի հարավ թեթևապես լայնացած մի միջանցքով, իսկ կողքից՝ դեպի հարավային կից ավանդատունը ցածրադիր մի միջանցքով[23]:

— Արևելյան մասը կազմված է դրսի կողմից շեշտված կիսագմբեթաձև մի աբսիդից և լուսավորված է ներքևից առիշեղ լայնացած մի նեղ լուսամուտով, որի վրա դրսի կողմից քանդակված է երկու ոլորաձև եզրերով մի վերնակամար:

Այս կենտրոնական մատուռի կառուցումը, հակառակ չափազանց դժվարին աշխատանք պահանջող շինանյութերի օգտագործման, իրականացված է խնամքով և կանոնավորությամբ: Նրա դիրքը և կառուցվածքը շատ նման են մի վկայարանի, և վստահաբար այստեղ է եղել Լուսավորչի գերեզմանը:

2. Կողմնական երկու կից ավանդատները թաղածածկ են՝ ամրացված մեկ հենակամարով: Այս ավանդատները, լինելով շատ լայն, որոշակի կերպով դուրս են գալիս բազիլիկայի կողմնական սահմաններից և վերջանում են կիսաշրջանակաձև մի աբսիդով, որի մեջ փորված են առիշեղ լայնացող երկու լուսամուտներ: Կողմնական ավանդատների արևմտյան ծայրը լայնորեն բացված է եղել մի մեծ կամարաշարքի տակ, որի արտաքին կեսը, ինչպես այն հստակորեն երևում է դրսից, հետագայում է որմափակված:

Սրանց կառուցվածքն անհամեմատ ավելի կոպիտ է, քան կենտրոնական մատուռինը, և ծածկը իրականացված է մի պարզ որմահեց քիվով՝ գրեթե հորիզոնական: Թե ինչի են ծառայել այս ավանդատները, հայտնի չէ: Պարզ է, որ սրանք ժամանակակից չեն ո՛չ կենտրոնական մատուռին (զգալի է շինության որակի տարբերությունը և մանավանդ ակնհայտ է նրանց անջատումը եկեղեցու գլխակողմում, որտեղ աբսիդը չի գրավում պատի և կենտրոնական մատուռի ամբողջ տարածությունը), ո՛չ էլ բազիլիկային (որովհետև այդ դեպքում ինչո՞վ հնարավոր կլիներ բացատրել արևմտյան կամարաշարքի առկայությունը): Մնում է ենթադրել, որ դրանք կենտրոնական մատուռի երկու կողքերին տեղակայված մի տեսակ **իվան**-ներ են՝ մի քիչ նման Ալայազի Զորաց (կամ Ս. Ստեփանոս) եկեղեցուն Սյունիքում[24] (ԺԳ դար), սակայն հավատացյալներին գրեթե բայց օդում մնալու դատապարտող այս կարգի շինությունը եթե տանելի է Վայոց Զորի տաք հովիտներում, ապա բնավ ըմբռնելի չէ ավելի քան 2500 մետր բարձրության վրա:

Տիպաբանական վերլուծություն և թվագրման փորձ

1. Սուրբ Գրիգոր Լուսավորչի վկայարանը (կենտրոնական մատուռ) մտնում է քառակուսու վրա բարձրացված պարզ գմբեթների տիպաբանական շրջանակի մեջ, որը գմբեթների հենման հարցի «նախնական մի լուծում» է: Այս կարգի օրինակները քիչ, բայց բոլորն էլ հին են. այդպիսին է Սամատավրոյում (Վրաստան) **Միրան թագավորի մատուռ** կոչվածը, որը վերագրվում է Դ դարին: Այդպիսիք են 400 թվականին կառուցված Ողջաբերդի եկեղեցին Այրարատյան նահանգում և Է դարին վերագրվող Լանջաղբյուրի Փառարի վանքը Սյունիքում: Աբսիդի կլորավուն եզրագիծը և կամարաշարքի զարդաքանդակը թույլ են տալիս մեզ Լուսավորչի այս վկայարանը թվագրելու ամենաուշը որպես Զ դարի կառույց:

2. Կողմնական ավանդատները, մեզ թվում է, նման են եղել, ինչպես վերևում նշեցինք, Ալայազի եկեղեցու տիպին մոտ **իվան**-ների: Արդարև, նկատի ունենալով դրանց չափերը և աբսիդների խորությունը, չենք կարող դրանք համարել սյունաշար աբսիդներ, ինչպիսիք կան որոշ ճեմասրահ վկայարաններում:

3. Այս բազիլիկան իր ամփոփվածությամբ, սյուների առկայությամբ, իր սկզբնական առատ լուսավորվածությամբ մոտենում է Ժ—ԺԱ դարերի բյուզանդական բազիլիկաների օրինակին, ինչպիսիք են Գուդին և Սկիրոսը[25]: Չենք կարող միաժամանակ ամբողջապես մերժել այն վարկածը, որ եկեղեցին կարող է և ավելի ուշ շրջանի մի շինություն եղած լինել, բայց ոչ ավելի ուշ, քան ԺԵ դարը՝ նկատի ունենալով վանքի հետագա լքյալ վիճակը:

Բ. ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցու ճարտարապետությունը

Այս փոքրիկ շինությունը գտնվում է նախորդի հյուսիս-արևելյան կողմը, նրանից ավելի ներքև: Սա գմբեթավոր մի նավ է՝ ներգծված ուղղանկյան մեջ: Գմբեթը գրավում է կամարի համարյա ամբողջ տարածությունը և հենված է մույթերի վրա ընդ-

տած կամարների վրա, որոնց արանքում կան առագաստներ: Գլանաձև թմբուկը լրիվ քանդված է[26]: Աբսիդը կիսաբոլորակ է: Երեք պատուհաններ՝ հյուսիսից, արևելքից և հարավից, լուսավորում են եկեղեցին: Դուռը բացվում է հարավային՛ պատից՝ հարավ-արևմտյան անկյան մոտ:

Եկեղեցու շինությունը կոպիտ է. այն կառուցված է տարբեր տրամաչափի քարաբեկորներով, որոնք իրար միացած են փխրուն շաղախով: Չկա ոչ մի զարդաքանդակ, բացի գմբեթակիր խոյակների զարդաքանդակից: Այս խոյակները կազմըված են ոչ շատ հաստ վերնախարիսխից, որի վրա կա Հայաստանում շատ հազվագյուտ կողովաձև մի զարդաքանդակ:

Մի քանի մետր հեռու, դեպի հարավ, կա առատահոս մի սառնաղբյուր, որ վըստահաբար «Բարեհամ» կոչված այն սըրբազան աղբյուրն է, որը, ըստ Ներսես Շնորհալու հիշատակած ավանդության, Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է բխեցրել:

Թվագրում և ճշգրտում

Եկեղեցու տիպաբանությունը (գմբեթավոր նավ) և արխիտեկտոնիկան (կլոր թմբուկ և խոյակների ձևավորում) թույլ են տալիս այս հուշարձանը թվագրել որպես Ժ կամ ԺԱ դարի կառույց: Տրամաբանական կլինի, հետևաբար, ենթադրել, որ սա հենց այն եկեղեցին է, որ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը կառուցել է տվել այս կողմերում[27]: Կաթողիկոսը չի ասում, թե ում էր նվիրված եկեղեցին, սակայն, ըստ հիշատակարանների, շատ հավանական է, որ այն գտնվում էր Ամենափրկչի հովանավորության ներքո:

Սուրբ քարանձավները գտնվում են ավելի ներքև, Ամենափրկիչ եկեղեցու հարավարևելյան կողմում: Դրանք փորված են կրաքարային մի բարձր պատի մեջ՝ մի տեսակ երկանիստ անկյան մակարդակի վրա: Գլխավոր քարանձավը, որը հավանաբար Մանեի քարանձավն է, այժմ դըժվարամատչելի և շատ վտանգավոր է դարձել տեղի ունեցած փլուզման հետևանքով:

Թորդանի ինը գերեզմանների վանքը

Թորդան գյուղը (Դոխան քոյ) գտնվում է Յուչքարդես Թեփե կոչված լեռան հարավային զառիթափերին: Եկեղեցին գյուղի կենտրոնում է և շրջապատված է շենքերով:

Պատմական տվյալներ

Ագաթանգեղոսի գրքի խմբագրություններից մեկում նշված է, որ Հերակլիոս կայսրը գրավեց Թորդան ավանը 625 թվականին և «Գրիգորի գերեզմանի վրա կառուցեց մի հոյակապ եկեղեցի»[28]: Եկեղեցու թմբուկի և գմբեթի ծածկի տեսքը ենթադրել է տալիս, որ այն վերանորոգվել է ուշ ժամանակներում, հավանաբար 1885 թվականին[29]:

Նկարագրություն

Եկեղեցին պահպանված է բավականին լավ վիճակում, բայց չափազանց դժվար է այն ուսումնասիրել նրա շուրջը կառուցված ժամանակակից շենքերի և եկեղեցու ներքնամասը խափանող հաստ գերանների պատճառով: Մեր կազմած հատակագծի որակը որոշ չափով տուժեց այդ կարգի զանազան արգելքների հետևանքով:

Ճարտարապետություն

Ըստ հատակագծի, եկեղեցին կիսով չափ դուրս երկարած մի եռախորան է: Կենտրոնական քառակուսին սահմանագծված է չորս ազատ մույթերով, որոնք իրենց վրա կրում են կիսաբոլորակ կամարներ: Թըմբուկն ու գմբեթը ներսից երեսապատված են միջին մեծությամբ քարերի շատ կանոնավոր շարվածքով, որոնք կցված են շաղախին: Դրսից ութանկյուն թմբուկը երեսապատված է հղկված սպիտակ գույնի քարերով, որոնք աները կերպով իրար կըցված են շաղախի լցոնով: Թմբուկը միջին մասում գոտևորված է մի զարդագոտիով. մի պարզ կիսակլոր գոտի, որի վերևում փորված են նեղ լուսամուտներ: Լուսամուտի կամարը երիզող գոտին ինքնատիպ է ինչպես իր ընդհանուր լուծումով, այնպես էլ իր կառուցման տեխնիկայով: Այս գոտին ամբողջապես հորինված է միջին հաշվով 22—17 սմ. մեծությամբ սպիտակ քարերով, որոնք միմյանց միացած են երկաթե ճանկավոր մեխերով:

Արևելյան աբսիդի երկու կողմերում կան երկու փոքր սենյակներ, որոնք մի նեղ միջանցքով բացվում են կողմնական խորաններին վրա: Դժբախտաբար անհնար եղավ մեզ մուտք գործել այդ սենյակները՝ դրանց անցքերը խափանված լինելով ծառերի հսկայական կոճղերով: Հետևաբար այդ սենյակներին վերաբերող մեր կազմած հատակագիծը կարող է շատ անստույգ լինել: Սենյակները լուսավորված են բարակ լուսանցույցներով. Նրանց վերևում, երկրորդ հարկի վրա, կան փոքր և նեղ ուրիշ սենյակներ, որոնք բարձրից բացվում են կողմնական խորանների վրա, ուր մուտք գործելու որևէ միջոց չէր երևում:

Թորդանի եկեղեցին

Արևմտյան խորանների մեջ, հարավային կողմում, գտնվում է մի հետաքրքիր փոքր կառույց, աղյուսից պատրաստված մի տեսակ խորանի ամպհովանի՝ ծածկված գաջի հաստ ծեփով: Դա անտարակույս յուրօրինակ մի զարդ է սուրբ Գրիգորի ենթադրյալ գերեզմանի վերևում:

Թվագրում

Դժբախտաբար մենք ոչ մի արձանագրություն չգտանք այստեղ: Եթե վստահելու լինենք եկեղեցու տիպաբանությանը, ապա նրա կառուցումը կարելի է թվագրել Թ դարի վերջին կամ Ժ դարի սկզբին՝ նկատի ունենալով կողմնական երկհարկանի սենյակների առկայությունը: Այսուհանդերձ, այս տիպի եկեղեցական շենքերը կարող են ետ գնալ մինչև Է դար, որովհետև բացառված չէ, որ վերոհիշյալ սենյակները հետագա դարերի հավելումներ եղած լինեն:

Սերովբեից վանք կամ Սեբեավանք

Այս փոքր մենաստանը երբեմն կոչվել է նաև Քերովբեից վանք, իսկ տեղի գյուղացիների կողմից՝ **Սերոփի վանքը:**

Վանքը գտնվում է Կարադաղի հարավային զառիթափի ստորոտին՝ շուրջ 2000 մետր բարձրության վրա, **Փերվիչայ-ի** վտակներից մեկի աջ ափին, **թավգիներ քոմու** յայլայում:

Պատմական տվյալներ

Ըստ ավանդության, այս վանքը հիմնադրվել է Ս. Գրիգորի կողմից այն վայրում, որտեղ նրան երևացել են երկու սերովբեներ, որոնք եկել են հայտնելու նրան, թե

իր հոր գործած ոճիրը քավելու համար ծնկաչոք Երուսաղեմ գնալու իր ծրագրին Աստված հավանություն չի տալիս: Այն ժամանակ Լուսավորիչն իբր կոչել է՝ «Գոհանամ», և դրանից էլ լեռան զառիթափն ստացել է իր անունը:

Նկարագրություն

Փոքրիկ եկեղեցին վանքից դեռևս կանգուն մնացած միակ շինությունն է: Սա միանավ մի փոքրիկ մատուռ է կիսաբոլորակ մի թաղով, որ ամրացված է երկու որմնասյուների վրա նստած հենակամարով: Եկեղեցու միակ զարդաքանդակը մի խաչքար է, որ հյուսիսային մույթը զարդարում է երկրաչափական ոճավորում ունեցող մի պարզ խաչով:

Հայտնի է, թե ինչքան դժվար է նման պարզ հուշարձանների համար կառուցման ստույգ մի թվական ճշտել: Այսուհանդերձ, եկեղեցու ճակտոնների ճարտարապետական զարդարանքը, որը հուշում է հեռավոր մի ժամանակաշրջանի մասին, չի բացառում, որ եկեղեցին կարող է հիմնադրված լինել հախա-արաբական ժամանակաշրջանում:

Սեպուհ լեռան գլխավոր վանքը
(Ավագ վանք)

Այս վանքը նույնպես ծանոթ է տարբեր անուններով՝ **Ս. Թադեոս Առաքելոյ վանք** կամ պարզապես **Առաքելոյ վանք** և երբեմն էլ **Ս. Թադեոս և Ս. Բարթուղիմեոս Առաքելոց** վանք, որովհետև ենթադրաբար այն հիմնվել է Ս. Թադեոս առաքյալի կողմից: Վանքը ծանոթ է եղել նաև **Լուսավորչի անապատ** անունով: Իսկ մահմեդականները այն կոչում են **Դերե** վանքը (Ձորավանք):

Այս վանքը, որ դեռևս բավականին լավ վիճակում է, գտնվում է շուրջ 2000 մետր բարձրության վրա:

Պատմական տվյալներ

Ավանդությունն ասում է, որ վանքը հիմնադրել է Ս. Թադեոսը և որպես ժառանգություն թողել է իր որդուն: Բայց իրականում այն վկայված է միայն ԺԳ դարում: Վանքը եղել է գրչության և արվեստի կարևոր կենտրոն, որից պահպանվել են երկու նկարազարդ ձեռագրեր՝ 1201 թվականի ավետարանը (Երևանի Մատենադարան, ձեռագիր № 10359), որի նկարազարդմանը մասնակցել է նկարիչ Հովհաննեսը, և 1202 թվականի հոչակավոր Մշո ճառընտիրը[31] (Երևանի Մատենադարան, ձեռագիր № 7729):

Ավագ վանքը դադարել է գործելուց 1230 թ. հավանաբար Խուարեզմի սուլթան Ջելալ-Էդդինի հրոսակախմբերի գործած ավերածությունների հետևանքով և վերսկսել է գործել միայն մեկ դար հետո վանքի վանահայր Մովսես վարդապետ Երզնկացու ջանքերով, որը կառուցել է տվել շրջափակի պարիսպը: Ավելի ուշ վանքը իր գործունեությունը շարունակել է մանավանդ Կիրակոսի առաջնորդության շրջանում (1366—1372): Սակայն, գրչության և արվեստի զարգացման տեսակետից, վանքի ամենածաղկուն ժամանակաշրջանը եղել է ԺԵ դարը, ինչ որ կարող է զարմանալի թվալ՝ նկատի ունենալով քաղաքական և ռազմական այն անիշխանական վիճակը, որ այդ ժամանակ տիրում էր երկրում: Շուրջ 1464 թ. վանքը իր ծաղկման գագաթնակետին է հասնում բազմաթիվ գիտնական վանականների շնորհիվ, երբ նաև շատ շինություններ վերանորոգվում և բարեկարգվում են Աստվածատուր Ջերմացի վարդապետի կողմից:

ԺԶ դարի վերջում Մաղաքիա Դերջանեցի վարդապետը այստեղ կառուցել է տալիս հարավային ժամատունը, վանական խուցեր և ծառայողական այլ շինություններ:

Նկարագրություն

Վանքից այժմ պահպանվել է միայն մի կուռ հուշարձանախումբ՝ բաղկացած երեք եկեղեցիներից: Վանական շենքերը, որոնց հետքերը հազիվ են երևում արևմտյան և հարավային կողմում, հողին են հավասարվել, հետևաբար ավելորդ թվաց մեզ դրանց հատակագիծը կազմել:

ա. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ճարտարապետություն

Այս եզակի հուշարձանն իր հատակագծով ու կառուցվածքով առանձնանում է մեզ ծանոթ մյուս բոլոր հայկական հուշարձաններից: Այն կազմված է գմբեթակիր մի նավից, որի երկու կողքերին կան երկու ավանդատներ:

Հյուսիսայինը կողմնական մի նեղ միջանցքով բացվում է գլխավոր նավի արևմտյան մասում: Դա միանավ մի շինություն է երկայնական կիսաբոլորակ թաղով: Հարավայինը գրեթե համաչափ է նախորդին: Ամբողջը ներառնված է ազատ

խաչաձև մի շրջագծի մեջ, իսկ կից ավանդատների ծածկը նույնպես ունի ազատ խաչի ձև:

Նկատի ունենալով օգտագործված շինանյութը՝ կարելի է ասել, որ եկեղեցին խընամքով է կառուցված, սակայն այստեղ չկա ո՛չ զարդաքանդակ, ո՛չ արձանագրություն:

Թվագրում

Եկեղեցու տիպաբանությունը շփոթություն է առաջացնում: Կարելի է ի հարկին այն մոտեցնել կողմնական ավանդատներով միանավ եկեղեցիների տիպին, որպիսիք գոյություն ունեն Արադեսում (Սյունիք) կամ Կիցան անապատում (Արցախ), բայց այստեղ նավն օժտված է գմբեթով, ինչպես միանավ գմբեթավոր բազիլիկաները և մասնավորաբար ինչպես Սորբի Սուրբ Կարապետի վանքը: Տեղյակ չլինելով Արթիկի Ս. Աստվածածին եկեղեցու ճշգրիտ կառուցվածքին, մենք կարող ենք ընդհանուր կերպով խոսել միայն նմանությունների մասին:

Հուշարձանի շինության որակը, ազատ խաչի ձև ունեցող նրա արտաքին կառուցվածքը, տրոմպների առկայությունը, թրմբուկի կտրատված անկյուններով ուղղանկյուն հատվածը, ահա այս բոլորը մեզ մղում են այս հուշարձանը դասել հին կառույցների շարքը, որի շինության թվականը, մեր կարծիքով, կարող է տեղադրվել նախա-արաբական ժամանակաշրջանում:

բ. Ս. ԹԱԴԵՈՍ ԿԱՄ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Ճարտարապետություն

Այս եկեղեցին եռանավ մի բազիլիկա է շատ ամփոփ հատակագծով՝ բաղկացած երկու հատվածից: Կենտրոնական թևը շատ ավելի լայն է, քան կողմնական թևերը: Այն ծածկված է կիսաբոլորակ թաղով, մինչդեռ կողմնական թևերը ծածկված են կիսաթաղերով: Այս վերջինները գլխավոր թևից բաժանված են կիսաբոլորակ երկու կամարաշարքերով, որոնք հենված են կենտրոնում քառակուսի կտրվածքներով հաստահեղույս մույթերից դուրս երկարող հենակների վրա: Ազատ մույթերից դուրս երկարող սյուների վրա հենված կրկնակամարները կայունացնում են երեք թևերը:

Գլխավոր աբսիդը որոշակիորեն պայտաձև է՝ կոյավորված կիսաբոլորակ երկու հատվածներով, որոնցից խորը ընկած կիսաշրջանակաձև աբսիդը, որը լուսավորվում է մի փոքր լուսանցույցով, իրենից ներկայացնում է մի աստիճան, որով աբսիդը մի փոքր շեշտվում է սինթրոնոնի առկայության շնորհիվ:

Եկեղեցին չունի միատեսակ որակյալ կառուցվածք և իր վրա կրում է ձախող վերանորոգումների հետքերը, հատկապես հյուսիս-արևմտյան, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան անկյուններում, որտեղ քարը փոխարինվել է աղյուսով:

Արձանագրություններ

Հուշարձանը չունի նվիրատվական արձանագրություն, սակայն պահպանված մյուս երեք արձանագրություններ թվագրված են՝

«Յամի 918 (=1469). ԳՐ[ի] Գ[ո]Ր... Գ...Ն»

«Յամի 913 (=1464)»

«Յամի 915 (=1466)»

Այս արձանագրություններից դուրս այլ փաստեր ակնկալել առայժմ հնարավոր չէ. 1464-ը հավանաբար կատարված մի վերանորոգման թվականն է: Տվյալ դեպքում եկեղեցու տիպաբանությունը մեզ այնքան էլ չի օգնում նրա կառուցման թվականը որոշելու տեսակետից, որովհետև նույնանման կամ մոտավոր հատակագիծ ունեցող հուշարձանների մեծ մասը ավելի ուշ շրջանի կառույցներ են (ԺԷ դար):

գ. Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս մատուռը գտնվում է նախորդ երկու եկեղեցիների միջև, և նրա ներքնապատերը կազմված են այս վերջինների պատերից:

Ըստ հատակագծի, սա միանավ մի կառույց է կողմնական խորշերով, որոնք պսակված են կիսակամարներով: Մատուռը ծածկված է կիսաշրջանակաձև թաղով առանց հենակամարի:

Ս. Կարապետ եկեղեցին կառուցված է մյուս երկու եկեղեցիներից հետո այնպիսի մի թվականի, որ թեև հնարավոր չէ ամենայն ճշտությամբ որոշել, բայց որ կարելի է տեղադրել ԺԱ և ԺԵ դարերի միջև:

ԿԱՊՈՍԻ ՎԱՆՔ ԿԱՄ Ս. ՀԱԿՈԲ ՄԾԲՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

Այս վանքը, որը կոչվում է նաև Գաբոսի վանք, այժմ հարևան գյուղի բնակիչներին ծանոթ է Սալիքե վանքը անունով:

Վանքը կառուցված է Սեպուհ լեռան արևելյան լանջին գտնվող խոտառատ մի

դարատակի վրա, Սոհաչայ կոչված գետակի ակունքների մոտ, շուրջ 2000 մետր բարձրության վրա:

Պատմական տվյալներ

Ավանդությունն այս վանքի հիմնադրումը վերագրում է Տրդատ Գ թագավորին, բայց վանքը պատմականորեն վկայված է միայն 1224 թ.[33]: Այստեղ ԺԳ և ԺԴ դարերում արտագրվել են ձեռագիր մի քանի մատյաններ, իսկ ԺԵ դարում վանքը միաժամանակ դարձավ գրչության շատ կարևոր կենտրոն և ունեցավ իր վանական դպրոցը, որտեղից դուրս եկան հոչակավոր վարդապետներ:

1425 թ. վանքը հրո ճարակ դարձավ, իսկ եկեղեցին կործանվեց Ակկոյունլու Կարա Յուլուք Օթմանի հրոսակների կողմից, բայց այդ բոլորը արագորեն վերանորոգվեց «առավել ևս շքեղ քան առաջ» և, բացի այդ, կառուցվեցին մի ժամատուն և վանական խուցեր:

Շուրջ 1500 թվականից սկսվեց անկման երկարատև մի շրջան, բայց ԺԷ դարում Կասպոսի վանքը դեռևս համարվում էր այդ շրջանի ամենակարևոր վանքերից մեկը: 1684 թ. այն «գրեթե հիմնովին» վերանորոգման ենթարկվեց Ավետիք Եվդոկիացու կողմից:

Նկարագրություն

Անցյալում վանքը շրջափակված է եղել պարսպով և բաղկացած է եղել Սուրբ Հակոբ (Հակոբ Մծբնա Հայրապետի) եկեղեցուց, Սուրբ Սիոն եկեղեցուց, մի ժամատնից, մի զանգակատնից և վանական այլ շենքերից: Այսօր պահպանված է միայն Սուրբ Հակոբ եկեղեցին համեմատաբար լավ վիճակում:

Ա. ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՆ

Ճարտարապետություն

Եկեղեցին ունի արևմտյան երկու ազատ հենապյուների մեջ ներփակված խաչաձև հատակագիծ: Ներսից կլորացած թմբուկը, որ թվում է, թե դրսից էլ է կլորացած եղել, սլացիկ է, և նրա վրա բարձրացած է կիսագնդաձև գմբեթը, որի դրսի վեղարաձև ծածկը անհետացել է: Աբսիդը հատակագծում զգալիորեն պայտաձև է: Նրա կողքերին կան կիսաբոլորակ կամարով երկու խորը թաղածածկ ավանդատներ: Կողմնական թևերն ունեն թեթևորեն բեկված կամարներ. այդպիսին է նաև արևմտյան թևը, որի մեջ բացվում են երկու խորշեր:

Եկեղեցու ներքնամասը լուսավորվել է թմբուկի մեջ բացված աղեղնաձև չորս մեծ պատուհաններով, գլխավոր աբսիդի և երկու խորանների մեջ բացված մի ուրիշ պատուհանով, ինչպես նաև կողմնական թևերի և արևմտյան թևի մեջ գտնվող պատուհաններով, որոնք վաղուց որմաքիսակվել են: Մուտքի դուռը գտնվում է արևմտյան կողմում:

Եկեղեցին կառուցված է միջին մեծությամբ բավականին կոպիտ քարերով, որոնք ամրացված են շաղախով, սակայն ներքնամասը երեսապատված է խնամքով, բացի կողմնական պատերից, որտեղ հաստ ծեփը ծածկում է մսակերեսի անկանոնությունները:

Զարդաքանդակները

Հուշարձանի ներքնամասն ունի բավականին հարուստ քանդակազարդում, մի բան, որ հազվագյուտ է Թուրքիայի այս մասում գտնվող հայկական հուշարձանների համար: Աբսիդն իրենից ներկայացնում է փոքրիկ քառակուսի ատամնազարդերից և սրածայր լեզվակներից բաղկացած մի քիվագոտի: Այս քիվագոտին երկարում է կողմնական թևերին կցված պատի վրա: Ներքևում, բայց միայն աբսիդում, կան իրար վրա դասավորված եռաբլթակ տարածություններ: Հաղթակամար խոյակների արևմտյան երեսին քանդակված են հարուսվից՝ դիմահայաց ցուլի մի գլուխ, իսկ հյուսիսից՝ քայլող մի ուռյուծ, որի գլուխը քանդված է: Հուշարձանի մնացած մասում, աբսիդում նկատվող նույն քիվագոտին գտնվում է միայն կողմնական թևերի վրա: Ազատ մույթերն ունեն մի բուն, որի անկյունները երկանիստ են և որտեղից բարձրանում է «սելջուկյան մի շղթա»: Դրանց խոյակները հորինված են եռաշար մի դրվագազարդով. երկանիստ անկյուններ խորշիկների տակ, եռաթերթ խորշիկներ և սլարզ երկանիստ անկյուններ, որոնք օսմանյան տիպի շթաքարերի տեսք են տալիս նրան: Հարավային սյան հյուսիսային ճակատի ներքևի մասում երևում է մարդկային մի գլուխ ճակատային տեսքով: Սյան խարսխի վրա, շրջված ձևով, վերարտադրված է քիվագոտու նույն զարդաքանդակը:

Արևմտյան բարավորը համեմատաբար պարզ է: Աղեղնաձև դուռը ներգծված է սրանկյուն կամարի մեջ, որի ուղիղ մասերը ընդգծված են մի նրբագեղ սյունիկով:

Դուսն կամարաձև հարթ տարածության վրա հղել է մի արձանագրություն, որ այժմ ջնջված է և որտեղ փորագրված է 1460 թվականը:

Թվագրում

Այս եկեղեցու կառուցման ժամանակին վերաբերվող բազմաթիվ տվյալներ կան, բայց դրանցից ոչ մեկը հստակ չէ, իսկ մի քանիսն էլ թվում է, թե հակասում են միմյանց:

ա. Դրական մի շարք հիշատակագրեր տեղեկացնում են մեզ, որ եկեղեցին հիմնադրվել է 1425 թվականին և քիչ ժամանակ անց՝ վերակառուցվել: Բացի այդ, հիշատակագրերից իմանում ենք, որ 1684 թվականին այն ենթարկվել է վերանորոգման, բայց թե ի՛նչ չափի վերանորոգում է եղել այդ, հայտնի չէ:

բ. Արևմտյան բարավորի վրա փորագրված է եղել 1460 թվականը, սակայն այժմ այդ քարն անհետացած է: Եկեղեցու արևելյան ճակատին մի ուխտավոր փորագրել է մի քանի խաչեր և 1587, որը նշում է կառուցման հուսալի թվականը:

գ. Արևմտյան երկու ազատ հենասյուների մեջ ներգծված խաչաձև հատակագիծն ավելի շուտ հատուկ է հունական և վրացական ճարտարապետությանը և հանդես է գալիս սկսած ԺԱ դարից: Հայաստանում այն շատ տարածված չի եղել: Այդպիսի հատակագծի մենք հանդիպում ենք մանավանդ Վասպուրականում ավելի ուշ ժամանակաշրջաններում կառուցված եկեղեցիներում, բացի Արենիի Սուրբ Աստվածածին եկեղեցուց, որը կառուցվել է 1321 թվականին[34]:

Աբսիդի՝ հատակագծից զգալիորեն դուրս երկարած լինելու հանգամանքը չպետք է համարել հնության ապացույց, որովհետև այդպիսիք հաճախ պատահում են ուշ շրջանի հուշարձաններում:

դ. Արևելյան աբսիդի եռաբլթակ շրջանակների կրկնակի եզրազարդը հայկական արվեստի ինքնատիպ դրսևորումներից մեկը է, որին մենք հանդիպում ենք միայն ԺԴ և ԺԵ դարերի մուսուլմանական արվեստում. օրինակ՝ Հալիմե Խաթուն իշխանուհու թյուրբե-ի ծածկի վրա Գևասում (Վասպուրական) (1358 թ.)[35] և մանավանդ Սեյիդ Յայա Բաքյուվի իշխանի թյուրբե-ի գմբեթի ներքնամասում, Միրվանի իշխանական պալատում (Բաքու), ԺԵ դար[36]:

Աբսիդի քիվը, ազատ սյուների խոյակների և դրանց խարսխի զարդաքանդակները իրենց հավասարը չունեն հայկական արվեստում, բացի Արծկեի Սքանչելագործի վանքի եկեղեցու ազատ սյուների խոյակների զարդարանքից, այն եկեղեցու, որի կառուցման թվականը հայտնի չէ, բայց որը հաստատապես հիմնովին վերանորոգվել է 1648 թվականի[37] երկրաշարժից հետո: Սրանց մոտիվը մոտենում է օսմանյան տիպի շթաքարերի մոտիվին, առանց դրա զարգացումն ունենալու, բայց իր գծային հորինվածքով և իր պարզությամբ հիշեցնում է նախա-արաբական ժամանակաշրջանի հայկական քառակուսի փոքրիկ ատամնազարդերը: Մահմեդական երկրում դրան մոտեցող ձևերի հանդիպում ենք ԺԵ դարում Միրվանի պալատի Դիվան Խանեի շքամուտքի վրա, որի մասին խոսեցինք վերևում:

Դժվար է այժմ եզրակացություն անել: Կարծում ենք, որ եկեղեցու գեղազարդումը մտահղացվել և իրականացվել է ԺԵ դարի կեսերին, բայց ԺԷ դարի վերջում կատարված վերանորոգումը մտածել է տվել նաև ազատ սյուների մասին, որոնք հավանաբար նախապես քանդակազարդվել էին արծվի և մարդու խորհրդապատկերներով: Այս վերջին վերարտադրված գեղազարդումը իրականացվել է ավելի կոպիտ ձևով: Խոյակները նույնպես հավանաբար ունեցել են մի քիչ ավելի բարդ զարդարանք, քան քիվինը:

Բ. ԺԱՄԱՏՈՒՆԸ (1425 Թ.)

Եկեղեցու արևմտյան ճակատի առջևում դեռևս երևում են հողին հավասարված ժամատան պատերը: Սա մի մեծ և ընդարձակ կառույց է եղել, որի ներքին հորինվածքը անհնար է գուշակել:

Գ. ՍՈՒՐԲ ՍԻՈՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս եկեղեցին, որի մասին վկայում են հիշատակարանները, հավանաբար գտնվում էր նախորդի հարավային կողմը: Համենայն դեպս այդտեղ է, որ նկատվում է հնարավոր մի աբսիդի շրջագիծը: Ամենայն հավանականությամբ սա եղել է միանավ մի եկեղեցի, որի մասին դժբախտաբար ավելի բան ասել չենք կարող:

Դ. ՊԱՐԻՍՊԸ

Վանքի պարիսպը որոշակիորեն երևում է արևելյան կողմում և մասամբ միայն

պահպանված է այլուր: Մուտքի դուռը գտնվում էր արևմտյան պատի հյուսիսային մասում: Հյուսիսային պատի երկայնքին նկատվում են վանական խուցերի և գուցե այն երկհարկանի շենքի հետքերը, որի մասին վկայում են անցյալ դարի ճանապարհորդները:

Ֆրանսերենից թարգմանեց
ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆԸ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց (Գ, էջ 91 [Լանգլուա 1869 թ., էջ 180]):
2. E. Boré, Correspondance et Mémoires d'un voyageur en Orient, Paris. 1840. p. 4—33.
3. Դ. Հակոբյանց, Սեպուհ լեռան սրբավայրեր, «Արարատ», 1901 թ., էջ 862—865. Ե. Փերտահչյան, Դարանաղյաց գավառ, «Սիոն», 1927 թ., էջ 211—214. Գ. Սյուրմենյան, Երզնկա, 1947 թ., Կահիրե, էջ 86—90:
4. «Արարատ», 1896 թ., էջ 218. «Բյուզանդիոն», 1900 թ. (№ 1067), 1902 թ. (№ 1680, 1720). «Արևելք», 1886 թ. (№ 853). տես նաև Գ. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903 թ., Հ. Ոսկյան, Բարձր-Հայքի վանքերը, Վիեննա, 1951 թ., էջ 1—51:
5. Դարանաղյաց գավառը գրավում էր Եփրատի ավազանը, Երզնկայի և Կամախի կիրճերի միջև, մայրաքաղաք ունենալով Անի-Կամախը: Դարանաղիք նշանակում է «աղուտներ». և, հիրավի, բազմաթիվ աղուտներ դեռևս գոյություն ունեն Կամախի (Տուզլա) հյուսիս-արևելյան կողմում: Տես Լ. Ինճիճյան, Ստորագրություն հին Հայաստանյայց, Վենետիկ, 1822 թ., էջ 8. Հ. Հյուբշման, Die altarmenischen Ortsnamen, Strasbourg, 1904, 283—284, 421. Գ. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903 թ., հատ. Ա, էջ 588—589. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963 թ., էջ 49: Եկեղյաց (եկեղեցիների) գավառը (հունարեն՝ Ակիլիսենե [Սորաբոն, Պտղոմեոս], Էկելևսենե [Պրոկոպիոս], Կելցենե, ապա նաև՝ Անաիտիս խորա, Անաիտիկա [Պլինիուս]) գտնվում է նախորդի վերևի կողմը և գրավում է Երզընկայի ավազանը. տես Գ. Էփրիկյան, Պատկեր, բնաշխ. բառարան, հատ. Ա, էջ 670—671. Ս. Երեմյան, նույն աշխ., էջ 50: Երեզ կամ Երզընկայ, Երզնկա, այժմ՝ Երզինկան. տես Գ. Էփրիկյան, նույն աշխ.. հատ. Ա, էջ 654—664. Նաև՝ Էրզինջան. տես Encyclopédie de l'Islam, nouvelle éd., Paris—Leyde (en cours): Հնադարյան Անին չպետք է շփոթել համանուն միջնադարյան Անի քաղաքի հետ, որը գտնվում է Արփաչայի վրա: Քամախ անունը (թուրքերեն՝ Քեմահ) նա ստացել է հետագայում:
6. Դարանաղցին (տես «Ժամանակագրութիւն», հրատ. Մ. Նշանյան, Երուսաղեմ, 1915 թ., էջ 511) այստեղ ակնարկում է Սեպուհ լեռան նվիրված Սուրբ Գրիգոր Լուսավորչի շարականին (տես «Շարական հոգևոր երգոց», Երուսաղեմ, 1986 թ., էջ 278—281): Տեղական ավանդությունը Սեպուհ լեռան վերագրում էր 24 վանք և եկեղեցի:
7. Encyclopédie de l'Islam, տես KEMAKH բառահոդվածը. նաև E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches.... Bruxelles. 1935. p. 55—57.
8. R. Grousset, l'Empire des Steppes..., Paris, 1948, p. 325. տես նաև 1229 թվականը կրող մի ձեռագրի հիշատակարանը, Մատենադարան, Երևան, ձեռ. № 6169 (Մ. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրի հիշատակարանը, Մատենադարան, Երևան, 1984 թ., էջ 160):
9. Վանի ձեռագիր (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հատ. Ա, էջ 343—344) և Վիեննա, ձեռ. № 7 (հայերեն ձեռագիր հիշատակարաններ, ԺԵ դար, հատ. Ա, էջ 496):
10. Երևան. Մատենադարան, ձեռ. № 5223 (նույնը, էջ 646):
11. Encyclopédie de l'Islam, տես DJALALI բառահոդվածը (հավելվածում):
12. Նյութի նորության, տեղանքի ներկայացրած դժվարությունների և տեղեկատու աղբյուրների սակավության պատճառով մենք չէինք կարողանա իր ավարտին հասցնել մեր սույն հետազոտությունը, եթե չստանայինք այն օգնությունը, որ բարեհաճեցին մեզ ցույց տալ տիկ. տիկ. Ն. Թիերին և Ա. Գալիցինը հենց տեղում, պր. պր. Ն. Մելիք-Հակոբյանցը և Տասնապետյանը՝ մատենագրական հետազոտությունների գծով, Ա. Պրալոնգ-Տայերը՝ քարտեզագրական նյութերով, առանց մոռանալու օր. Սիրարփի Տեր-Ներսեսյանին, պր. պր. Ժան-Պիեռ Մահեին և Մ. Վան Էսբրուկին, որոնք իրենց թանկագին խորհուրդներով օժանդակեցին մեր աշխատանքին: Բոլորին հայտնում ենք այստեղ մեր ջերմ շնորհակալությունները:
13. Տեղական արտասանություն: Բառի ճիշտ ուղղագրությունն է Տուռնա կալե (=կռունկների դղյակ):
14. Synaxaire de Ter Israel, Ed. et trad. G. Bayan էջ 568—569 [PO, 16, 1 (1978 թ.) էջ 66—67]: Պետք է նշել, որ այս լեռան զառիթափերին գիհի կամ գի (Juniperus communis) չի աճում, այլ՝ կենսաքար կամ կենսեղի (Thuya orientalis). որի հնագույն տեսակներն ունեին ազատ օդում մասամբ տարածված և իրարից անջատված

արմատներ, որոնք իրոք կարող էին իրենց մեջ պատսպարել փոքրաճասակ մի մարդու:

15. Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց, Վենետիկ, 1810—1815, հատ. Գ, էջ 355:

16. Հ. Պերպերյան, Վարդան վարդապետ, «Աշխարհացույց», Փարիզ, 1960 թ., էջ 22, 45—46:

17. Վարդան Արևելցու «Աշխարհացույցի» կարճ տարբերակում ասվում է, որ խաչի վերածված սուրը պիտի ծառայի որպես նշան միաբանության՝ ազատագրելու համար հայ ժողովրդին, իսկ երկար տարբերակում հստակորեն նշված է, որ թողություն պիտի լինի ֆրանգներին:

18. Ադյ Բ № 3: Տես Լանգլուա, նույն աշխ. 1869 թ. էջ 91. M. Brosset, Collection d'Historiens Arméniens, St. Pétersbourg, 1876, p. 498. Synaxaire, 30 IX [PO].

19. Saint-Martin, Histoire d'Arménie par le patriarche Jean V, Paris, 1841, p. 286.

20. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հատ. Ա, էջ 496:

21. Հարկավոր է մեկընդմիշտ ճշտել, որ մեր հատակագծերը կազմվել են շատ հապճեպ, անբարենպաստ պայմաններում և հետևաբար չեն կարող ներկայացնել կատարյալ ճշգրտություն:

22. Թեև թուրքերեն Զանկլը վանքը անունը, որը վկայում է մի զանգակատան գոյության մասին, թույլ է տալիս ենթադրել վերևում կարևոր մի շինվածքի վերացումը, որն անկասկած վերաբերում է մի բարձր զանգակամարի:

23. Հյուսիսային կողմում չկա սիմետրիկ անցք:

24. МАК, 13 = В. Сысоев и Х. Кючюк—Исмаилов, Материалы по Археологии Кавказа 13 Москва, 1916 г., стр. 103—104.

25. G. Millet, L'école grecque dans l'architecture byzantine, Paris, 1916, p. 43—45.

26. 1906 թվականին նրա վիճակի մասին տես Գ. Սյուրմենյան, նույն աշխ., էջ 90:

27. Տես Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու պատմածը (Saint-Martin, նույն աշխ., էջ 285):

28. M. van Esbroeck, Un nouveau témoin du livre d'Agathange, Revue des Etudes Arméniennes, 8, 1971, p. 95 161—162.

29. Դ. Հակոբյանց, նույնը, 1901 թ., էջ 382:

3 . Langlois, Collection des Historiens Anciens et Modernes de l'Arménie, Paris, 1867, vol. 1, p. 120 132—133.

31. Մ. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 149—154:

32. Տես Երևանի Մատենադարանի 1229 թ. № 6169 ձեռագրի հիշատակարանը (Մ. Մաթևոսյան, նույն աշխ., էջ 160, ինչպես նաև R. Grousset, նույն աշխ., 1948 թ., էջ 325:

33. Վիեննայի № 200 ձեռագրում (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԲ դար, էջ 141) կա մի վկայություն, որտեղ նշված է Վարդան անունով մի վանականի մասին:

34. M. Thierry Monastères Arméniens du Vaspurakan. VI, Revue des Etudes Arméniennes, 1972 p. p. 145—146 Արենիի եկեղեցու մասին չկա ճարտարապետական ուսումնասիրություն: Մեր շնորհակալությունն ենք հայտնում պր. Պ. Կուենոյին, որը մեզ ծանոթացրեց իր կազմած անտիպ հատակագծին:

85. O. Aslanapa, Yüzillar boyunca türk sanati, (14 yüzil). s. 1, 1977, p. 98. T. Talbot Rice, 1961 p., էջ 263:

36. O Aslanapa, Kirim ve Kuzey Azerbaycan'da türk eserleri, Istanbul, 1978, էջ 39—44:

37. M. Thierry, նույն աշխ., 1972 թ., էջ 138—6: